

# Սուրբ Գրոց Սերտողութիւն : Դաս Թիւ 167

**Ապաշխարութիւն եւ հաւատք** – Թէպէտ ապաշխարութիւն եւ հաւատք տարբեր տարրեր են եւ կարելի է զանազանել դրանց, սակայն կարելի չէ բաժանել դրանց՝ քանի որ դրանք անբաժանելիօրէն կապուած են իրարու հետ: Մի մեղաւոր չի նախ դառնում իր մեղքերից եւ ապա յետագայում վստահում Քրիստոսին, իսկ այս երկուսն էլ կատարում են միասնաբար եւ միեւնոյն ժամանակում:

Կարող ենք ասենք թէ ապաշխարութիւնը եւ հաւատքը մի մետաղադրամի երկու կողմերն են՝ մի դարձում մեղքից դէպի Աստուած: Մէկը որ վստահում է Յիսուսին պիտի նաեւ միեւնոյն ժամանակ թողնի իր մեղքերը, այլապէս նա ոչ ապաշխարել է եւ ոչ էլ հաւատացել է: Վերակազմ աստուածաբան Ջան Մարին կոչում է իսկական ապաշխարութիւնը որպէս մի «հաւատացող ապաշխարութիւն», եւ իսկական հաւատքը որպէս մի «ապաշխարող հաւատք»: Մեր աւետիսի պատգամի ներկայացումը ոչ լրիւ է ու ոչ ճշգրիտ առանցի մեղաւորներին ուղղած կոչը որ հարկ է թէ ապաշխարեն իրենց մեղքերից եւ թէ հաւատան Քրիստոսին փրկութեան համար (Ուլտամինստրը Հաւատոյ Հանգանակ 15:1):

**Տէրութեան փրկութեան վիճաբանութիւնը** – Բողոքականութեան մէջ եղել են տարակարծութիւններ այս կէտի նկատմամբ՝ ոմանք վիճելով թէ փրկութեան համար եղած մեղքից ապաշխարութեան պահանջը ինչպէս նաեւ հաւատալը Քրիստոսին գործերի միջոցով եղած փրկութեան հաստատումն է, որը հակասում է շնորհքի աւետիսին: Ոմանք ունեն այդ տեսանկիւնը որ մէկը փրկում է երբ նա հաւատում է Յիսուսին որպէս Փրկիչ, եւ մի ապագայ ժամանակում գուցէ նաեւ ենթարկւի Նրան որպէս Տէր: Այս էր Լուիս Սփերի Շէյֆրի տեսանկիւնը՝ վաղ 20րդ դարու Արմէնական եւ Տնտեսական հովիւ եւ աստուածաբան, Դալաս Աստուածաբանական ճեմարանի հիմնադիրն ու նախագահը: Իր Կարգաւորած Աստուածաբանութեան մէջ նա գրում է թէ՛ «Նոր Կտակարանը չի պարտադրում ապաշխարութիւնը ոչ-փրկւածից որպէս փրկութեան մի պայման»: Նա նաեւ գրում է թէ քարոզիչը պիտի քարոզի «Քրիստոսի Տէրութիւնը բացառապէս Քրիստոնեաներին, եւ Քրիստոսի Փրկչութիւնը դրանց որոնք ոչ-փրկւած են»:

Թէկուզ ուրիշները անցեալում որոշ չափով վիճել էին թէ այս կէտի համաձայն եւ թէ դրա դէմ, այս հարցը իր գազաթնակէտին հասաւ 1980-ական թիւերում, ճանաչելով որպէս «Տէրութեան Փրկութեան» վիճաբանութիւնը՝ երբ Դալաս ճեմարանի փրոֆէսոր Զէյն Հաջըզը պահպանեց Շէյֆրի կարծիքը, իսկ հովիւ Ջան Մըքարթըրը՝ նաեւ մի Տնտեսական, քննադատեց այս տեսանկիւնը, վիճելով որ մէկը չի կարող յիրաւի հաւատալ Յիսուս Քրիստոսին որպէս Փրկիչ առանցի նաեւ ենթարկելով Նրան որպէս Տէր: Իրականում, Մըքարթըրի եւ նրա նման ուրիշների այս տեսանկիւնը մի նոր ուսուցում չի, այլ այդ եղել է Քրիստոնէութեան պատմական վարդապետութիւնը՝ ըստ ուսուցանուած Աստուածաշնչում (Եսայիա 55:6-7, Մարկոս 1:14-15, Գործք Առաքելոց 20:21, 26:20, Ա. Թեսալոնիկեցիս 1:9, Եբրայեցիս 6:1): Փրկութեան ճշմարիտ աւետիսը ներառնում է թէ ապաշխարութեան եւ թէ հաւատքի քարոզչութիւնը՝ որոնք պատահում են միասին, երկուսն էլ լինելով անհրաժեշտ մեղաւորների փրկութեան համար:

Ոմանք վիճում են թէ կան բազմաթիւ հատուածներ ուր միայն Քրիստոսին հաւատալն է նշուած որպէս փրկութեան պահանջք (պայման) (Յովիաննէս 3:16, Գործք Առաքելոց 16:31, Հռովմայեցիս 10:13): Սակայն ինչպէս նշեց մեկնաբանութեան սերտաշարքում, մենք չենք վերցնում համարներ անջատուած եւ դրանց վրայ շինում վարդապետութիւններ. այլ, մենք նկատի ենք առնում համարներ իրենց ենթահողում եւ համերաշխ ամբողջ Աստուածաշնչի պարզ ուսուցումների հետ: Մենք կարող ենք նաեւ վկայակոչել բազմաթիւ համարներ ուր միայն ապաշխարութիւնն է նշում որպէս փրկութեան պայման (Ղուկաս 5:32, 24:46-47, Գործք Առաքելոց 2:37-38, 17:30): Այս բոլորը ցուցադրում են թէ երբ Սուրբ Գիրքը խօսում է Քրիստոսին հաւատալու առթիւ, այն նաեւ անխուսափելիօրէն ներառնում է մեղքից ապաշխարութիւնը. եւ նաեւ երբ այն խօսում է մեղքից ապաշխարութեան առթիւ, այն նաեւ անհերքելիօրէն ներառնում է Քրիստոսին հաւատալը:

Երբ մենք քարոզում ենք հաւատքի պէտքը առանց նաեւ ապաշխարութեան կոչը, մենք նազեցնում ենք աւետիսը, հաղորդելով մի ծանծաղ պատգամ, եւ իրականում ներկայացնում ենք մի կեղծ աւետարան: Այս երբեմն կոչում է որպէս «արժան շնորհք» կամ «հեշտ հաւատք»: Մինչ մենք հաստատում ենք աստուածաշնչային վարդապետութիւնը թէ փրկութիւնը միայն շնորհքով է, միայն հաւատքի միջոցով է, եւ միայն Քրիստոսումն է, սակայն այս չի նշանակում որ այդ հաւատքը որը փրկում է մի արժան հաւատք է, մի մակերեսային հաւատք. իսկ, այդ հաւատքը որը փրկում է մի հաւատք է որը անբաժանելիօրէն կապուած եւ ուղեկցում է ապաշխարութեան հետ՝ որը կ'իմաստի իր իրականութիւնը մի աճման եւ բարի գործերի կեանքովը (Եփեսացիս 2:8-9, Ուլտամինստրը Հաւատոյ Հանգանակ 15:3): Ոչ ոք կարող է ունենալ Քրիստոսին որպէս Փրկիչ առանցի նաեւ ունենալ Նրան որպէս Տէր (Հռովմայեցիս 6:17-18, Ա. Յովիաննէս 2:3-6): Աստուածաշունչը կոչում է նրանց որոնք փրկել են որպէս նրանք որոնք մեռել են մեղքին, որոնց հին մարդը խաչել եւ թաղել է Քրիստոսի հետ, եւ յարութիւն են առել Քրիստոսի հետ, եւ կոչուած են որ կեանքի նորոգութեան մէջ ման գալ (Հռովմայեցիս 6:1-7, 11, Բ. Կորնթացիս 5:17, Կողոսացիս 3:9-10, Յակոբոս 2:17):